ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 27 սեպտեմբերի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Սյունիք, համայնք Տաթև գյուղ Տաթև հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՀՀ կառավարության որոշում 11/03/2004թ. N313-Ն,դիմում գույքի բաժանման մասին 24.09.2019թ.

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 09-097-0318-0110
Մակերեսի չափը (հա)՝ 0.8326
Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Այլ հողատեսք
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 27092019-09-0038, գաղտնաբառ՝ BVJRAS3R2WBV

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Սամվել Ղահրամանյան

Ձևաղեցրած պաշտոնը՝ Սյունիքի մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 27092019-09-0038, գաղտնաբառ՝ BVJRAS3R2WBV

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019ԹՎԱԿԱՆԻ N 55-Ա

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» ենթակետով, ավագանին ***որոշում է.***

1.<<Հայաստանի |Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի նախադպրոցական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության <<Ընդհանուր դրույթներ>> բաժնում 3-րդ կետը՝ Հաստատության գտնվելու վայրն է ՀՀ Սյունիքի մարզ, Տաթև համայնք, գ. Տաթև, փողոց 4, թիվ 21 գրառումը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հաստատության գտնվելու վայրն է ՀՀ Սյունիքի մարզ, գյուղ Տաթև, 10–րդ փողոց,2-րդ շենք:

2.Համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել սույն որոշման 1-ին կետով նշված փոփոխության իրականացման համապատասխան ընթացակարգը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԻՆԱՍՅԱՆ ԳՈՒԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019ԹՎԱԿԱՆԻ N 56-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով <<Էկո-երիտասարդություն>> հասարակական կազմակերպության նախագահի 17/10/2019թ-ի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, հաշվի առնելով համայնքում հասարակական կազմակերպությունների բացակայությունը և կարևորելով համայնքային կյանքի աշխուժացումը, ավագանին ***որոշում է.***

1.ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի սեփականություն հանդիսացող Տաթև համայնքի Տաթև գյուղում գտնվող՝ ՀՀ Սյունիքի մարզ, Տաթև համայնք փողոց 4 թիվ 21 հասցեի նախկին մանկապարտեզի շենքը (վկ.՝2557554, կադ. ծածկ. 09-097-0034-0010) անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել <<Էկո-Երիտասարդություն>> հասարակական կազմակերպությանը:

2.Համայնքի ղեկավարին՝ պարտավորեցնել և կազմակերպել որպեսզի <<Էկո-Երիտասարդություն>> կազմակերպությունը իր գործունեության ընթացքում՝ վերանորոգի վերը նշված շինությունը, բարձրացնի համայնքաբնակների բնապահպանական գիտակցությունը, վեր հանի համայքնում և երկրում առկա բնապահպանական ու երիտասարդական խնդիրները և

առաջարկներ ներկայացնի համապատասխան շահագրգիռ կողմերին համայնքում զբոսաշրջության խթանման և զարգացման խնդիրների լուծման վերաբերյալ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԻՆԱՍՅԱՆ ԳՈՒԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019ԹՎԱԿԱՆԻ N 57-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 71-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի դրույթներով, համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, ավագանին ***որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթևի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ N1 հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

2. Առաջարկել Տաթև համայնքի ղեկավարին՝ Տաթևի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու առաջարկությամբ սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:

3. Տաթևի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների մասով համապատասխան փոփոխությունները ուժի մեջ են մտնում ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԻՆԱՍՅԱՆ ԳՈՒԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ**